ՆՈՐ ԳՐՔԵՐ

Կ. Ս. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ — «Կոլտուրական հեղափոխությունը Սովետական Հայաստանում», ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 2000, 302 էջ, գինը՝ 1 ռ. 05 կ.

Մենագրությունը լույս է տեսել ռուսերեն լեզվով։ Այն բաղկացած է երեք գլուխներից, որոնցում հեղինակը հանգամանորեն ցույց է տալիս Սովետական Հայաստանում կատարված կոլտուրական վերափոխումները՝ սկսած 1920 թվականից և հասցնում է մինչև 1940 թվականը։

Գիրքն ունի անգլերեն լեզվով ամփոփում, գրականության և օգտագործված աղբյուրների ու անձնանունների ցանկ։

ՍԵՐԻԿ ԴԱՎԹՅԱՆ — «Հայկական ժանյակ», ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 2000, գինը՝ 1 ռ.

Ուսումնասիրություն նվիրված է հայկական ասեղնագործ ժանյակին։ Հեղինակը պարզաբանում է հայկական ժանյակի տեսակները, դրանց կատարման հնարները, աշխարհագրական տարածման, ազգագրական ու գեղարվեստական առանձնահատկություններին վերաբերող բազմաթիվ հարցեր։

Աշխատությանը կցված են ալբոմ (ուր զետեղված են հայկական ժանյակների ավելի քան 125 նկար), ամփոփումներ ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով։

ԼՈՒՍԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ — «Թլկատինցի», ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 2000, 202 էջ, գինը՝ 57 կ.

Այս գրքում առաջին անգամ փորձ է արվում ներկայացնելու Թլկատինցու գրական ժառանգությունը։ Աշխատության հեղինակը արխիվային հարուստ նյութերի և նորահայտ փաստերի օգտագործմամբ տվել է գրողի կյանքն ու գրական-մանկավարժական գործունեությունը, մանրամասն վեր է լուծել նրա բազմաժանր ստեղծագործությունը, ցույց է տվել Թլկատինցու դեմոկրատական աշխարհայացքն ու ժողովրդայնությունը, որոնք անմիջականորեն կապվում են անցյալ դարի հայ աշխատավորության կյանքի բարելավման, նրան շահագործումից ու բռնակալությունից փրկելու հեռանկարների հետ։